ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ (ՄԱԳԱՏ)

1993թ. մայիսի 17-ին Ալմաթիում 9 երկրների՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ադրբեջանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Թուրքմենստանի, Ուզբեկստանի Հանրապետության և Ուկրաինայի բարձրագույն որակավորման (ատեստավորման) մարմինները հիմնեցին Որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիա (ՄԱԳԱՏ): Միաժամանակ այդ 9 երկրների կառավարությունները ստորագրեցին <<Գիտական աստիճանի փաստաթղթերի ճանաչման և համապատասխանեցման, գիտական աստիճանների համադրելիության մասին միջկառավարական համաձայնագիրը>>:

ՄԱԳԱՏ-ը ստեղծվեց գիտական և գիտմանկավարժական կադրերի որակավորման բնագավառում սերտ և արդյունավետ համագործակցության նպատակով:

ՄԱԳԱՏ-ի հիմնական խնդիրներն են՝ փոխադարձ օգնություն և ընդհանուր սկզբունքների համապատասխանեցում գիտական և գիտամանկավարժական որակավորման բնագավառում, միջազգային փորձի վերլուծություն և ընդհանրացում, մասնակից կողմերին հետաքրքրող հարցերի շուրջ տեղեկատվական նյութերի փոխանակում:

Նշված խնդիրների սահմաններում ՄԱԳԱՏ-ը մշակում է խորհրդատվական փաստաթղթեր՝ գիտական աշխատողների մասնագիտությունների անվանացանկերի, աստիճանաշնորհման մասնագիտական խորհուրդների ստեղծման և աշխատանքի կազմակերպման, գիտական աստիճան հայցողին ներկայացվող պահանջների, տեղեկտվական համակարգերի ստեղծման և օգտագործման տվյալների վերլուծման վերաբերյալ:

ՄԱԳԱՏ-ի բարձրագույն մարմինը կոնֆերանսն է, որը որպես կանոն գումարվում է տարին մեկ անգամ՝ անդամ երկրներից որևէ մեկում: Այն նախագահում է տվյալ երկրի ատեստավորման պետական մարմնի ղեկավարը:

ՄԱԳԱՏ-ի գործադիր մարմինը (շտաբ-բնակարանը) գտնվում է Աստանայում. ղեկավարը Ղազախստանի Հանրապետության ատեստավորման պետական մարմնի ղեկավարն է:

ՄԱԳԱՏ-ը ստեղծել է երկու մշտապես գործող կոմիտեներ՝ ֆինանսատնտեսական և տեղեկատվական: ՄԱԳԱՏ-ը և կոմիտեները պարբերաբար կազմակերպում են աշխատանքային խորհրդակցություններ, որոնք մինչ այժմ կայացել են Սանկտ-Պետերբուրգում, Մոսկվայում, Տաշքենդում:

1994 թվականին Կիևում, ՄԱԳԱՏ-ի երկրորդ կոնֆերանսում, ՀՀ ԲՈՀ-ի նախագահ Ա. Գրիգորյանը դիմեց ՄԱԳԱՏ-ին անդամակցվելու խնդրանքով և Հայաստանի Հանրապետության Կառավարության անունից հայտարարեց <<Գիտական աստճանի փաստաթղթերի ճանաչման և համապատասխանեցման, գիտական աստիճանների համադրելիության մասին միջկառավարական համաձայնագրին>> Հայաստանի միանալու մասին: Կոնֆերանսի որոշմամբ ՀՀ ԲՈՀ-ը դարձավ ՄԱԳԱՏ-ի անդամ:

ՄԱԳԱՏ-ի երրորդ կոնֆերանսը կայացավ 1995թ. սեպտեմբեր ամսին, Բիշքեկում:

1995թ. հունիսի 27-ին ՄԱԳԱՏ-ի գործունեության շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև ստորագրվեց համաձայնագիր բարձրագույն որակավորման գիտական և

գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության մասին:

1996թ. Մոսկվայում կայացավ ՄԱԳԱՏ-ի չորրորդ, 1997թ. Ալմաթիում՝ հինգերորդ, 1998թ. Երևանում՝ վեցերորդ և 1999թ. Մինսկում յոթերորդ կոնֆերանսները:

2007թ. հոկտեմբերի 11-12-ին Աստանայում կայացավ գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիայի (ՄԱԳԱՏ) 8-րդ, իսկ 2008թ. նոյեմբերի 24-26-ին Սանկտ-Պետերբուրգում տեղի ունեցավ ՄԱԳԱՏ-ի 9-րդ կոնֆերանսը: Դրանց մասնակցեց ՀՀ ԲՈՀ-ի նախագահ Ա. Թռչունյանը:

ՄԱԳԱՏ-ի 8-րդ Կոնֆերանսի մասնակիցները ընդունեցին հետևյալ օրակարգը.

1. ՄԱԳԱՏ-ի 7-ից 8-րդ Կոնֆերանսների միջև ընկած ժամանակահատ¬վածում որակավորման ազգային մարմինների գործունեության մասին:

Որակավորման ազգային մարմիններ

2. Հաշվետու ժամանակահատվածում (2000-2007) ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանի աշխատանքի մասին: ՄԱԳԱՏ-ի 7-րդ Կոնֆերանսի որոշումների իրագործման մասին:

ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարան

3. Որակավորման ազգային մարմինների բազմակողմանի համագործակցության հարցերը, որակավորման համակարգի հիմնական խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Որակավորման ազգային մարմիններ

4. ՄԱԳԱՏ-ի 9-րդ Կոնֆերանսի անցկացման ժամկետների և վայրի մասին:

5. Կոնֆերանսի արձանագրության ընդունումը:

Քննարկելով օրակարգի հարցերը, ՄԱԳԱՏ-ի 8-րդ Կոնֆերանսը ընդունեց հետևյալ որոշումները.

1. Ընդունել ի գիտություն՝

- 2000-2007 թվականներին ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանի կատարած աշխատանքի մասին հաշվետվությունը.
- Ղազախստանի Հանրապետության ԿԳՆ Կրթության և գիտության ոլորտում վերահսկողության և որակավորման կոմիտեի նախագահի տեղեկատվությունը ՄԱԳԱՏ-ի 7-րդ Կոնֆերանսի որոշումների իրագործման մասին.
- որակավորման ազգային մարմինների ղեկավարների տեղեկատվությունը կատարած աշխատանքի մասին:

2. ՄԱԳԱՏ-ի Կանոնադրությունում կատարել հետևյալ փոփոխությունը՝

2.9 կետում <<ԲՈՀ-ի նախագահ>> բառերը փոխարինել <<գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմնի նախագահ>> բառերով:

3. Ընդունել հետևյալ առաջարկությունները՝

3.1. Որակավորման ազգային մարմիններին՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարան ներկայացնել գիտական մասնագիտությունների Անվանացանկի էլեկտրոնային տարբերակները և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները (մասնագիտությունների խոշորացում, նոր մասնագիտությունների ընդգրկում), ուշադրություն դարձնելով նպատակահարմարությանը կամ առավել մանրամասն մասնագիտացմանը, օրինակ, այնպիսի մասնագիտությունների, ինչպիսիք են՝

08.00.05 - Տնտեսագիտություն և ժողովրդական տնտեսության կառավարում.

13.00.02 - Դասավանդման և դաստիարակության տեսություն և մեթոդիկա.

14.00.33 - Հանրային առողջություն և առողջապահություն և այլն:

Ընդունել ի գիտություն, որ Ռուսաստանի Դաշնությունը կներկայացնի Անվանացանկի նոր խմբագրությունը մինչև 2008 թվականի ապրիլի 1-ը:

Խնդրել ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանին ամփոփել ներկայացված տեղեկատվությունը մինչև ՄԱԳԱՏ-ի 9-րդ Կոնֆերանսի նիստը:

3.2. Որակավորման ազգային մարմիններին՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը ներկայացնել առաջարկություններ ատենախոսական աշխատանքների հիմնական արդյունքների և դրույթների ընդգրկման համար գիտական հրատարակություններին ներկայացվող միասնական չափանիշների մշակման վերաբերյալ:

Խնդրել ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանին ամփոփել ներկայացված տեղեկատվությունը մինչև ՄԱԳԱՏ-ի 9-րդ Կոնֆերանսի նիստը:

3.3. Որակավորման ազգային մարմիններին առաջարկել այլ երկրների քաղաքացիներ հանդիսացող հայցորդների նախաձեռնային ատենախոսությունների (հայցորդը չի սովորել ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում) ներկայացման դեպքում կամ ՄԱԳԱՏ-ի մասնակից-երկրների թեմատիկային նվիրված ատենախոսությունները ուղարկել լրացուցիչ փորձաքննության համապատասխան որակավորման ազգային մարմին և քննարկել դրանք միայն եզրակացություն ստանալուց հետո: Մասնագիտական խորհուրդներին առաջարկել նման ատենախոսություններ ընդունելու դեպքում պաշտոնական ընդդիմախոսներից մեկին նշանակել տվյալ երկրի գիտնականներից կամ հարցում կատարել՝ համապատասխան երկրի կազմակերպություններից ատենախոսության վերաբերյալ կարծիք ստանալու համար:

3.4. Որակավորման ազգային մարմիններին առաջարկել ցուցաբերել փոխադարձ աջակցություն ատենախոսությունների լրացուցիչ փորձաքննության անհրաժեշտության դեպքում:

3.5. Որակավորման ազգային մարմիններին առաջարկել՝ ատենախոսությունների վերաատեստավորման դեպքում, որոնցում կհայտնաբերվեն փոխառումներ առանց հեղինակին և աղբյուրին հղումների, հաշվի առնել հայցորդներին գիտական աստիճաններից զրկելու հնարավորությունը՝ որակավորման ազգային մարմնի կողմից միջնորդություն ներկայացնելիս և տեղեկացնել ՄԱԳԱՏ-ի մասնակից-երկրների որակավորման ազգային մարմիններին:

3.6. Որակավորման ազգային մարմիններին՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը ներկայացնել ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարան թեկնածուական քննությունների ցանկը էլեկտրոնային տեսքով: Խնդրել ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանին ամփոփել տվյալ նյութերը և ներկայացնել հանձնարարականներ ընդհանուր գիտական առարկաներից թեկնածուական քննությունների փոխադարձ ճանաչման վերաբերյալ մինչև ՄԱԳԱՏ-ի 9-րդ Կոնֆերանսի նիստը: Առաջարկել դիտարկել փիլիսոփայությունից քննության փոխարեն <<գիտության պատմություն և փիլիսոփայություն (ըստ բնագավառների)>>առարկայից թեկնածուական քննություն անցկացնելու հնարավորությունը:

3.7. Առաջարկել որակավորման ազգային մարմիններին ներկայացնել ատենախոսական խորհուրդներին այս կամ այն երկրի պետական լեզվով գրված ատենախոսությունների սեղմագրերում ընդլայնել ռուսերենով կամ որևէ միջազգային լեզվով ներկայացված ամփոփագիրը մինչև 3 էջ (հետևյալ մասերի ծավալուն ամփոփումով. նպատակը, խնդիրը, արդիականությունը, գիտական նորույթը, հետազոտության հիմնական դրույթները և արդյունքները):

3.8. Առաջարկել որակավորման ազգային մարմիններին ներկայացնել ատենախոսական խորհուրդներին ՄԱԳԱՏ-ի մասնակից-երկրների որակավորման մարմիններ ուղարկել ատենախոսությունների սեղմագրերի էլեկտրոնային տարբերակները՝ ռուսերենով գրված սեղմագրերը ամբողջությամբ, իսկ պետական լեզվով գրված սեղմագրերի համար՝ ռուսերենով կամ որևէ միջազգային լեզվով ամփոփագրերի ելքային տվյալները:

3.9. Որակավորման ազգային մարմիններին առաջարկել Web-կայքերում ավելացնել <<ՄԱԳԱՏ>> բաժինը՝ գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման համակարգի վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերի և ասո¬ցիացիայի բոլոր մասնակիցների համար հետաքրքրություն ներկայացնող նյութերի ռուսերեն լեզվով հրատարակման համար:

Որակավորման ազգային մարմիններին՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարան ներկայացնել Web-կայքերի հասցեները, էլեկտրոնային փոստերի հասցեները և ՄԱԳԱՏ-ի հետ կապերի համար պատասխանատու անձանց թեկնածությունները:

4. ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանին հանձնարարել Ռուսաստանի Դաշնության որակավորման ազգային մարմնի հետ համաձայնեցնել ՄԱԳԱՏ-ի հերթական Կոնֆերանսի անցկացման հնարավորությունը 2008 թվականի հուլիսին Սանկտ-Պետերբուրգ քաղաքում:

5. Հանձնարարել ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանին հրավիրել մյուս երկրների որակավորման պետական մարմիններին ՄԱԳԱՏ-ի Կոնֆերանսին մասնակցելու:

Սույն արձանագրությունը կազմված է ռուսերեն լեզվով վեց օրինակից 2007 թվականի հոկտեմբերի 12-ին:

Ադրբեջանական Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից	Գ. Տագիզադե
Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից	Ա. Թոչունյան
Ղազախստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության Կրթության և գիտության ոլորտում վերահսկողության և որակավորման կոմիտեի կողմից	Ն. Կալաբան
Մոլդովայի Հանրապետության հավատարմագրման և որակավորման ազգային խորհրդի կողմից	Լ. Անդրոնիկ
Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից	Ֆ. Շամխալով
Ուկրաինայի բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից	Վ. Բոնդարենկո

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ <<ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ: ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ>>

IX Կոնֆերանսի

ՈՐՈՇՈՒՄ

2008 թվական, նոյեմբերի 24-25, Սանկտ-Պետերբուրգ

Ամփոփելով Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետկան մարմինների միջազգային ասոցիացիայի (ՄԱԳԱՏ) <<Այլ պետությունների գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին փաստաթղթերի ճանաչում և համարժեքության հաստատում: Գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին պետական նմուշի փաստաթղթերի հաստատում>> IX Կոնֆերանսի արդյունքները, մասնակից ՄԱԳԱՏ-ի անդամները համաձայնվեցին աջակցել գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման ոլորտում համագործակցության հետագա ընդլայնմանը և գիտությունների դոկտորի ու թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսություններին ներկայացվող համաձայնեցված պահանջների սահմանմանը՝ ՄԱԳԱՏ-ի անդամ-երկրների բարձրագույն որակավորում ունեցող գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների կողմից տրվող որակավորման փաստաթղթերի փոխադարձ ճանաչման և համարժեքության հաստատման նպատակով՝ կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությամբ սահմանված կարգով.

1. Համարել նպատակահարմար իրականացնել ՄԱԳԱՏ-ի անդամ-երկրների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման միայն պետական մարմինների կողմից տրվող գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին փաստաթղթերի փոխադարձ ճանաչումը և համարժեքության հաստատումը:

2. Առաջարկել գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին փաստաթղթերի ճանաչումը և համարժեքության հաստատումը իրականացնել համապատասխան գիտական աստիճաններ և գիտական կոչումներ ունեցող անձանց վերաատեստավորման արդյունքների հիման վրա:

3. Սահմանել գիտական աստիճանների մասին պետական նմուշի փաստաթղթերի ճանաչման և համարժեքության հաստատման հետևյալ ընդհանուր սկզբունքները.

3.1. ատենախոսությունների պաշտպանությունների անցկացման հրապարակայնու¬թյունը.

3.2. ատենախոսություններին ներկայացվող պահանջների համատեղելիությունը բոլոր մասնագիտություններով և գիտությունների բնագավառներով.

3.3. ատենախոսության հիմնական գիտական արդյունքների հրատարակումը.

3.4. գիտական աստիճաններ հայցողների ընդհանուր գիտական և մասնագիտական պատրաստվածության մակարդակի որոշումը.

3.5. ատենախոսությունների փորձաքննության իրավասությունը, օբյեկտիվությունը և անկախությունը:

4. ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանին՝ մինչև 01.02.2009թ. ՄԱԳԱՏ-ի անդամ-երկրների ներկայացուցիչներից կազմավորել աշխատանքային խումբ՝ գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին պետական նմուշի փաստաթղթերի փոխադարձ ճանաչման և համարժեքության հաստատման համաձայնեցված մոդելի մշակման նպատակով: Աշխատանքային խմբին հանձնարանել պատրաստել առաջարկություններ հետևյալ հարցերով ՄԱԳԱՏ-ի կողմից որոշումների ընդունման համար.

4.1. գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին պետական նմուշի որակավորման փաստաթղթերի փոխադարձ ճանաչման և համարժեքության հաստատման համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

4.2. գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին պետական նմուշի որակավորման փաստաթղթերի իսկության հաստատման կարգը.

4.3. հայցորդի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության առկայության վերաբերյալ պահանջները

4.4. Դոկտորական և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ընդհանուր համաձայնեցված չափանիշները:

5. Պարտադիր համարել գիտական աստիճանի կամ գիտական կոչման մասին պետական նմուշի որակավորման փաստաթղթի ճանաչումը և համարժեքության հաստատումը մերժելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ուղարկել համապատասխան եզրակացությունը այն երկրի գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման ազգային մարմին, որի կողմից այդ փաստաթուղթը տրվել է:

6. Սահմանել հետևյալ հիմնական հարցերը ՄԱԳԱՏ-ի X Կոնֆերանսին քննարկման համար.

6.1. ատենախոսությունների հիմնական գիտական արդյունքների հրատարակման համար ընդունելի գիտական ամսագրերի և հրատարակությունների ցանկի կազմավորման հիմնական չափանիշները (պատասխ.՝ Բելառուսի Հանրապետության ԲՈՀ).

6.2. գիտական մասնագիտությունների անվանացանկը (պատասխ.՝ Ռուսաստանի Կրթության և գիտության նախարարության ԲՈՀ).

6.3. օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնված թեկնածուական (որակավորման) քննությունների արդյունքների ճանաչման սկզբունքները (պատասխ.՝ Հայաստանի Հանրապետության ԲՈՀ):

7. Հանձնարարել ՄԱԳԱՏ-ի անդամ-երկրների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմիններին մինչև 01.04.2009թ. Բելառուսի Հանրապետության ԲՈՀ ներկայացնել՝

7.1. ատենախոսությունների հիմնական գիտական արդյունքների հրատարակման համար ընդունելի գիտական ամսագրերի և հրատարակությունների ցանկը, դրա կազմավորման չափանիշները.

7.2. գիտական մասնագիտությունների անվանացանկը.

7.3. թեկնածուական (որակավորման) քննությունների ցանկը և ընդունման կարգը.

7.4. քննարկվող հարցերով եզրափակիչ փաստաթղթի ընդունման համար առաջարկությունները:

8. Գործածության մեջ դնել՝ ՄԱԳԱՏ-ի յուրաքանչյուր հերթական Կոնֆերրանսին՝ նախորդ Կոնֆերրանսի որոշումների կատարման մասին ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանի հաշվետվության լսումը (պատասխ.՝ Ղազախստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության Կրթության և գիտության ոլորտում վերահսկողության կոմիտե).

8.1. Հանձնարարել Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության ԲՈՀ-ին ամփոփել ՄԱԳԱՏ-ի IX Կոնֆերանսի նյութերը և ներկայացնել դրանք ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարան՝ ՄԱԳԱՏ-ի անդամներին առաքման նպատակով:

9. ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանին՝ անցկացնել Ասոցիացիայի ընդարձակմանն ուղղված համապատասխան միջոցառումներ՝ այլ պետությունների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման ազգային մարմինների հրավիրման շնորհիվ:

10. ՄԱԳԱՏ-ի Շտաբ-բնակարանին՝ ՄԱԳԱՏ-ի շրջանակներում միասնական տեղեկատվական դաշտի ստեղծման և տեղեկատվությամբ փոխանակման նպատակով՝

10.1. մինչև 01.05.2009թ. պատրաստել և հրատարակել ՄԱԳԱՏ-ի գործունեության մասին տեղեկատվական նյութեր ռուսերեն և անգլերեն լեզուներով.

10.2. մինչև 01.02.2009թ. մշակել առաջարկություններ ՄԱԳԱՏ-ի պաշտոնական Web կայքի ստեղծման և ապահովման վերաբերյալ.

10.3. Մինչև 01.05.2009թ. մշակել առաջարկություններ ՄԱԳԱՏ-ի անդամների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների կողմից ՄԱԳԱՏ-ի պաշտոնական լեզվով իրենց գործունեության մասին պարտադիր տեղեկատվության ցանկի, ձևերի և ներկայացման ժամկետների վերաբերյալ՝ Ինտերնետ ցանցում տեղադրելու համար:

11. Ընդունել Բելառուսի Հանրապետության ԲՈՀ-ի առաջարկությունը ՄԱԳԱՏ-ի հերթական X Կոնֆերանսն անցկացնել 2009թ. մայիս-հունիս ամիսներին Մինսկում:

Փաստաթուղթը կազմված է 7 օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար ուժ:

Ադրբեջանական Հանրապետության կողմից	Մեխտիև Ա.Շ.
Հայաստանի Հանրապետության կողմից	Թռչունյան Ա.Հ.
Բելառուսի Հանրապետության կողմից	Աֆանասև Ա.Ա.
Ղազախստանի Հանրապետության կողմից	Կալաբան Ն.Բ.
Մոլդովայի Հանրապետության կողմից	Գայնդրիկ Կ.Վ.
Ռուսաստանի Դաշնության կողմից	Շամխալով Ֆ.Ի.
Ուկրաինայի կողմից	Բոնդարենկո Վ.Դ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԿԱԴՐԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
(ՄԱԳԱՏ)
X ԿՈՆՖԵՐԱՆՍԻ

ՈՐՈՇՈՒՄ

Բելառուսի Հանրապետություն
2009թ. հունիսի 8-9

Ամփոփելով Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիայի (ՄԱԳԱՏ) X Կոնֆերանսի արդյունքները, լսելով և քննարկելով Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության ԲՈՀ-ի կողմից ներկայացված Գիտական մասնագիտությունների անվանացանկը, Բելառուսի Հանրապետության ԲՈՀ-ի կողմից առաջարկված՝ ատենախոսությունների հիմնական գիտական արդյունքների հրատարակման համար ընդունելի գիտական ամսագրերի և հրատարակությունների ցանկի ձևավորման ընդհանուր չափանիշները, Հայաստանի Հանրապետության ԲՈՀ-ի կողմից ներկայացված՝ օրենսդրությամբ սահմանված կարգով թեկնածուական (որակավորման) քննությունների հանձնման արդյունքների փոխադարձ ճանաչման սկզբունքները, և բազմակողմանի համագործակցության այլ հարցեր, ՄԱԳԱՏ-ի նրա մասնակից անդամները՝ համաձայնվեցին գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման ոլորտում համագործակցության հետագա ընդլայնման, գիտական աստիճաններ հայցողներին և գիտական հրատարակումներին ներկայացվող պահանջների համաձայնեցման մասին.

1. Հավանություն տալ Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության 2009թ. փետրվարի 25-ի հ.59 հրամանով հաստատված Գիտական մասնագիտությունների անվանացանկին և ՄԱԳԱՏ-ի մասնակից՝ որակավորման պետական մարմիններին օպտիմալացնել ազգային Անվանացանկերը, 2005թ. ապրիլի 5-ի ԱՊՀ անդամ-երկրների Կրթության նախարարների կոնֆերանսի որոշմանը համաձայն, որպես հիմք ընդունելով Ռուսաստանի Դաշնության Գիտական մասնագիտությունների անվանացանկը: Ընդ որում.

1.1. ուշադրություն դարձնել գիտության որոշ բնագավառների (բժշկական և կենսաբանական գիտություններ) բաժանմանը մասնագիտությունների խմբերի և այլ բնագավառների (գյուղատնտեսական և անասնաբուժական գիտություններ, հումանիտար գիտություններ, սոցիալ-տնտեսական և հասարակական գիտություններ) միավորմանը.

1.2. համարել ոչ նպատակահարմար թեոլոգիայի (աստվածաբանության) ընդգրկումն այն բնագավառների ցանկում, որոնցով մասնագիտական խորհուրդները և որակավորման պետական մարմինները շնորհում են գիտական աստիճաններ.

1.3. մինչև 2010թ. հունվարի 15-ը ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան ներկայացնել մասնագիտությունների վերանայված ազգային անվանացանկերը:

2. Առաջարկել որակավորման պետական մարմիններին ընդլայնել մասնագիտական խորհուրդներում այլ երկրներից գիտությունների դոկտորների, գիտության համապատասխան բնագավառում առջատար մասնագետների ընդգրկման գործընթացը՝ հաշվի առնելով այդ երկրների որակավորման պետական մարմինների երաշխավորությունը:

3. Խնդրել Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության ԲՈՀ-ին մշակել իրավական հիմքեր հիմնական (առաջատար) մասնագիտություններով միջազգային մասնագիտական խորհուրդների ստեղծման և գործունեության համար:

4. Ատենախոսական հետազոտությունների հիմնական արդյունքների հրատարակման համար երաշխավորված հրատարակությունների ցանկում (այսուհետև՝ Ցանկ) ընդգրկվելու համար անհրաժեշտ է ընդունել հետևյալ չափանիշները.

4.1. հրատարակությունները պետք է ունենան գիտական, և գիտամեթոդական բնույթ.

4.2. հրատարակությունները պետք է ունենան մասնագիտական ընդգրկում՝ ըստ գիտության բնագավառների և գիտական ուղղությունների (առավելագույնը՝ երեք).

4.3. հրատարակության պարբերականությունը պետք է լինի՝ ամսագրերի համար՝ տարեկան առնվազն երկու համար է, գիտական աշխատանքների ժողովածուների համար՝ առնվազն մեկ. ընդ որում՝ հրատարակության ընդգրկումը Ցանկում պետք է լինի նրա հրատարակումից առնվազն մեկ տարի հետո.

4.4. հրատարակության խմբագրական խորհուրդը պետք է գլխավորի գիտությունների դոկտոր, իսկ կազմում ընդգրկված լինեն գիտությունների դոկտորներ նրա ուղղվածությանը համապատասխան գիտական բնագավառներից և ուղղություններից.

4.5. հրատարակությունում հրապարակվող նյութերը պետք է գրախոսվեն.

4.6. հրատարակության տպաքանակը առնվազն 100 օրինակ.

4.7. հրատարակությունը պետք է գրանցված լինի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով.

4.8. հրատարակության հրապարա¬կումներում պարտադիր են հղումները.

4.9. որևէ օտար լեզվով ամփոփագրի առկայությունը պարտադիր է (հնարավորության դեպքում, երկու լեզուներով, որոնցից մեկը դասվում է միջազգային հաղորդակցության պաշտոնապես ճանաչված լեզուների շարքին).

4.10. հրատարակության հրապարակումներում պետք է նշվեն նյութերի ներկայացման և տպագրությանն ընդունման ամսաթվերը:

5. Անհրաժեշտ համարել որակավորման պետական մարմինների կողմից ամեն տարի մինչև հունվարի 15-ը ազգային Ցանկերի ներկայացումը ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան:

6. Առաջարկել ՄԱԳԱՏ-ի մասնակից՝ որակավորման պետական մարմին¬ներին մշակել ատենախոսական հետազոտությունների հիմնական արդյունքների հրատարակման համար երաշխավորված արտասահմանյան հրատարակությունների ազգային Ցանկերը, դրանցում ընդգրկելով այն հրատարակությունները, որոնք ներառված են.

6.1. Web of Science ցիտման երեք համակարգերից մեկում. Science Citation Index Expanded (բնական գիտություններով բազա), Social Sciences Citation Index (սոցիալական գիտություններով բազա), Arts and Humanities Citation Index (արվեստով և հումանիտար գիտություններով բազա);

6.2. ՄԱԳԱՏ-ի այլ մասնակիցների ազգային Ցանկերում:

7. Առաջարկել ՄԱԳԱՏ-ի մասնակից՝ որակավորման պետական մարմիններին մշակել չափանիշներ ատենախոսության թեմաներով մենագրությունների հրատարակման համար երաշխավորված հրատարակչությունների, և դրանց հիման վրա կազմել հրատարակչությունների այդպիսի ցանկ:

8. Նպատակահարմար համարել ասպիրանտուրայի (դոկտորանտուրայի) ավարտման մասի պետական նմուշի ավարտական փաստաթղթի տրամադրումը և

առաջարկել ՄԱԳԱՏ-ի մասնակից՝ որակավորման պետական մարմիններին կատարել անհրաժեշտ փոփոխություններ ազգային օրենսդրություններում:

9. Համարել նպատակահարմար.

9.1. որակավորման (թեկնածուական) քննությունների և ստուգարքների արդյունքների ընդունումը՝ հանձնումից հետո 10 տարվա ընթացքում.

9.2. ՄԱԳԱՏ-ի մասնակից-երկրների օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնված որակավորման (թեկնածուական) քննությունների արդյունքների փոխադարձ ճանաչումը, հիմք ընդունելով՝ տվյալ երկրի որակավորման պետական մարմնի կամ այդ երկրի հետբուհական կրթության կառավարման պետական մարմնի կողմից հաստատված՝ ներկայացված վկայականը (հավաստագիրը):

10. Առաջարկել Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության ԲՈՀ-ին 2009թ. երկրորդ կիսամյակում կազմակերպել խորհրդակցություն փիլիսո¬փայության (գիտության պատմության և փիլիսոփայության, գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության) թեկնածուական քննության ծրագրով ուսուցման առարկայի վերաբերյալ հարցերի քննարկմանը նվիրված:

11. Հանձնարարել ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանին իրականացնել միջոցառումներ ՄԱԳԱՏ-ի գիտալրատվական տեղեկագրի հրատարակման ուղղությամբ՝ խմբագրական խորհրդում ընդգրկելով որակավորման մարմինների ղեկավարներին, ինչպես նաև միջոցառումներ՝ ՄԱԳԱՏ-ի web-կայքի ստեղծման ուղղությամբ:

12. Հաշվի առնելով գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման կարևոր նշանակությունը և աճող պատասխանատվությունը, որակավորման պետական մարմինների համագործակցության ամրապնդման և ՄԱԳԱՏ-ի շրջանակներում նրանց գործունեության ընդլայնման, առանձին երկրներում նախագծերի մշակման և նոր օրենսդրական ակտերի, ինչպես նաև միջկառավարական համաձայնագրերի ընդունման անհրաժեշտությունը, անհրաժեշտ համարել ՄԱԳԱՏ-ի մասնակից-երկրներում որակավորման պետական մարմինների կարգավիճակի բարձրա¬ցումը, նկատի ունենալով Ադրբեջանական Հանրապետության և Բելառուսի Հանրապետության՝ այդ երկրների Նախագահներին անմիջականորեն ենթակա՝ ԲՈՀ-երի փորձը:

13. Խնդրել Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության ԲՈՀ-ին քննարկել և համաձայնեցված կարգով ներկայացնել առաջարկություններ 2008թ. դեկտեմբերին ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի ընդունած <<Գիտնականի կարգավիճակի մասին>> մոդելային օրենքի վերաբերյալ:

14. Սահմանել հետևյալ հիմնական հարցերը ՄԱԳԱՏ-ի XI Կոնֆերանսին քննարկելու համար.

14.1. ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանի հաշվետվությունը ՄԱԳԱՏ-ի IX և X Կոնֆերանսների որոշումների կատարման մասին (պատասխ.՝ Ղազախստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության Կրթության և գիտության ոլորտում վերահսկողության կոմիտե):

14.2. ՄԱԳԱՏ-ի մասնակից-երկրներում գիտական կադրերի որակավորման երկաստիճան համակարգի վիճակի և կատարելագործման մասին (պատասխ.՝ Հայաստանի Հանրապետության ԲՈՀ):

14.3. Էլեկտրոնային տեղեկատվության միջոցների օգտագործման մասին՝ ատենախոսական հետազոտությունների արդյունքների և հիմնական դրույթների ներկայացման համար և գիտական գիտամանկավարժական կադրերի որակավորման ժամանակ, այդ թվում, <<ՀԱԿԱԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ>> ծրագրի կիրառման մասին

(պատասխան.՝ Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության ԲՈՀ):

14.4. ՄԱԳԱՏ-ի գիտալրատվական տեղեկագրի հրատարակման և ՄԱԳԱՏ-ի web-կայքի գործողության մասին (պատասխ.՝ Ղազախստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության Կրթության և գիտության ոլորտում վերահսկողության կոմիտե):

14.5. ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանի աշխատանքի օպտիմալացման նպատակով ՄԱԳԱՏ-ի կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին (պատասխան.՝ Ադրբեջանական Հանրապետության ԲՈՀ):

15. Ընդունել Ուկրաինայի ԲՈՀ-ի առաջարկությունը ՄԱԳԱՏ-ի հերթական XI Կոնֆերանսը 2010թ. հունիսին անցկացնել Ուկրաինայում:

Փաստաթուղթը կազմված է 2009 թվականի հունիսի 9-ին, ռուսերեն լեզվով, 7 օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար ուժ:

Ադրբեջանական Հանրապետության կողմից	Մեխտիև Ա.Շ.
Հայաստանի Հանրապետության կողմից	Թռչունյան Ա.Հ.
Բելառուսի Հանրապետության կողմից	Աֆանասև Ա.Ա.
Ղրղզստանի Հանրապետության կողմից	Բորուբաև Ա.Ա.
Մոլդովայի Հանրապետության կողմից	Սպատարու Տ.Ի.
Ռուսաստանի Դաշնության կողմից	Շամխալով Ֆ.Ի.
Ուկրաինայի կողմից	Դերժալյուկ Ն.Ս.

Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի և Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիայի միջև փոխադարձ համաձայնության մասին

Հուշագիր

Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիան (այսուհետ՝ ՄԱԱՆ) և Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիան (այսուհետ՝ ՄԱԳԱՏ), այսուհետև՝ <<Կողմերը>>,

հաշվի առնելով Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի 23-ի համաձայնագրի Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիայի հիմնադրման մասին 1993 թվականի մայիսի 17-ի համաձայնագրի դրույթները, ձգտելով Կողմերի միջև իրավահավասար և գործընկերային համագործակցության կարգավորմանն ու զարգացմանը,

առաջնորդվելով Կողմերի նպատակներով և խնդիրներով, ձեռք բերեցին փոխադարձ համաձայնություն հետևյալում՝

1. Կողմերը կհամագործակցեն գիտության ոլորտում, նախ և առաջ՝ բարձրագույն որակավորում ունեցող գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման բնագավառում:
2. Կողմերի համագործակցությունը կիրականացվի սույն Հուշագրի շրջանակներում, հաշվի առնելով Կողմերի հիմնարար փաստաթղթերը, ինչպես նաև ՄԱԱՆ-ում և ՄԱԳԱՏ-ում ընդունված այլ փաստաթղթերը:
3. Սույն Հուշագրի 1-ին կետում նշված ոլորտներում համագործակցության զարգացման նպատակով Կողմերը կաջակցեն համատեղ ծրագրերի և միջոցառումների մշակմանը, որոնք ուսումնասիրվում և հաստատվում են Կողմերի լիազոր մարմինների սահմանված կարգով:
4. Կողմերը պայմանավորվեցին, որ համատեղ ծրագրերի և միջոցառումների կատարման պայմանները որոշվում են Կողմերի՝ սահմանված կարգով համաձայնեցված առանձին փաստաթղթերով:
5. Կողմերը կտեղեկացնեն միմյանց իրենց կողմից անցկացվող կարևորագույն միջոցառումների մասին և կաջակցեն վերջիններին իրենց ներկայացուցիչների մասնակցությանը:
6. Կողմերի ներկայացուցիչները փոխադարձ պայմանավորվածությամբ կարող են հրավիրվել մասնակցելու ՄԱԱՆ-ի և ՄԱԳԱՏ-ի միջոցառումներին, ինչպես նաև դրանց մարմինների նիստերին:
7. Վեճերը և տարաձայնությունները Կողմերի միջև, որոնք կարող են ծագել սույն Հուշագրի իրականացման ընթացքում, ենթակա են լուծման բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով՝ փոխադարձ ըմբռնման և գործընկերության սկզբունքների հիման վրա:
8. Կողմերը կարող են վկայակոչել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ ծրագրերի և նախագծերի վերաբերյալ փաստաթղթերով հաստատված հարաբերությունները, ինչպես նաև հիշատակել փոխհարաբերությունների հաստատման մասին տեղեկատվական նյութերում, մամուլի համար հաղորդագրություններում և այլն:
9. Կողմերի համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ կամ լրացումներ, որոնք ձևակերպվում են համապատասխան

Արձանագրություններով և ուժի մեջ են մտնում Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրվելու օրվանից և սույն Հուշագրի անբաժանելի մասն են:

10. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

Կատարված է Կիևում 2010 թվականի հունիսի 22-ին, երկու օրինակից, ռուսերեն լեզվով, ընդ որում երկու օրինակները ունեն հավասար ուժ:

Մեկ օրինակը պահպանվում է ՄԱԱՆ-ում, մյուսը՝ ՄԱԳԱՏ-ում:

Գիտությունների ակադեմիաների
միջազգային ասոցիացիայի համար

_____ Բ.Ե.Պատոն

ՄԱԳԱՏ-ի համար

_____ Ն.Բ.Կալաբան
_____ Ա.Հ.Թոչունյան
_____ Ա.Ա.Աֆանասյեվ
_____ Տ.Ի.Սպատարու
_____ Ֆ.Ի.Շամխալով
_____ Վ.Ֆ.Մաչուլին

Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիայի XI Կոնֆերանսի
ՈՐՈՇՈՒՄ

2010 թվականի 22-23 հունիսի, ք.Կիև

Ամփոփելով Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիայի (ՄԱԳԱՏ) XI Կոնֆերանսի արդյունքները, մասնակից ՄԱԳԱՏ-ի անդամները համաձայնվեցին աջակցել գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման բնագավառում համագործակցության հետագա ընդլայնմանը և որոշեցին հետևյալը՝

1. Ընդունել ի գիտություն ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանի հաշվետվությունը ՄԱԳԱՏ-ի IX և X Կոնֆերանսների որոշումների կատարման մասին: Շնորհակալություն հայտնել Ղազախստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության Կրթության և գիտության ոլորտում վերահսկողության կոմիտեին ՄԱԳԱՏ-ի աշխատանքների կազմակերպման համար:

2. Հիմնադրել ՄԱԳԱՏ-ի Պատվոգիր, կատարելով համապատասխան փոփոխություններ ՄԱԳԱՏ-ի կանոնադրության 2-րդ մասում:

Մշակել ՄԱԳԱՏ-ի Պատվոգրի մասին կարգի նախագիծը (պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության ԲՈՀ):

3. Տեղափոխել ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանը Ռուսաստանի Դաշնություն (ք.Մոսկվա): Կատարել փոփոխություններ ՄԱԳԱՏ-ի կանոնադրությունում, շարադրելով 2.9 կետը հետևյալ խմբագրությամբ. «ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանի ղեկավարն է Ռուսաստանի Դաշնության գործադիր իշխանության դաշնային մարմնի՝ գիտական և գիտամանկավարժական կադրերի պետական որակավորման համար պատասխանատու ներկայացուցիչը»:

4. Համարել նպատակահարմար ՄԱԳԱՏ-ի մասնակից-երկրներում գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման գործող պետական համակարգերի պահպանումը:

Մշակել գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմնի կարգավիճակի և լիազորությունների մասին կարգի նախագիծը (պատասխանատու՝ Բելառուսի Հանրապետության ԲՈՀ, Հայաստանի Հանրապետության ԲՈՀ):

5. Հանձնարարել ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանին կատարել աշխատանքներ ասոցիացիայի ընդլայնման և նրա կազմում որպես ասոցիացված անդամներ եվրասիական տարածաշրջանի պետությունների որակավորման պետական մարմինների ներգրավվման ուղղությամբ:

6. Հիմնադրել «ՄԱԳԱՏ-ի տեղեկագիր»:

Հանձնարարել ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանին հրատարակել Տեղեկագիրը ռուսերեն լեզվով տարին առնվազն մեկ անգամ:

7. ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանին՝ ստեղծել ՄԱԳԱՏ-ի web-կայքը:

ՄԱԳԱՏ-ի web-կայքում տեղադրել տեղեկատվություն ՄԱԳԱՏ-ի գործունեության մասին, գիտական կադրերի որակավորման ազգային համակարգերի նորմատիվ իրավական փաստաթղթերը, ատենախոսական խորհուրդներում պաշտպանվող դոկտորական ատենախոսությունների սեղմագրերը, առանց աղբյուրը նշելու գիտական արդյունքների փոխառության բացահայտված փաստերի մասին:

8. Առաջարկել որակավորման ազգային մարմիններին կայքերում ավելացնել միջազգային համագործակցությանը վերաբերող բաժին՝ ԱՊՀ բոլոր երկրների համար հետաքրքրություն ներկայացնող նյութերի հրատարակման նպատակով:

9. Հնարավոր համարել միջպետական մասնագիտական խորհուրդների ստեղծումը՝ պետություններում համապատասխան գիտական մասնագիտություններով գիտությունների դոկտորների անհրաժեշտ քանակի բացակայության դեպքում: Մշակել Միջպետական մասնագիտական խորհրդի մասին կարգի նախագիծ (պատասխանատու՝ Ուկրաինայի ԲՈՀ):

10. Առաջարկել գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմիններին որակավորում անցկացնելիս ճանաչել ատենախոսական հետազոտությունների արդյունքների հրապարակման համար երաշխավորված գիտական մասնագիտացված հրատարակությունների ազգային Ցանկերը, որոնք ձևավորված են ՄԱԳԱՏ-ի X-րդ Կոնֆերանսի որոշումներով հաստատված պահանջներին համապատասխան:

11. Հավանություն տալ Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի և Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիայի միջև փոխադարձ համաձայնության մասին Հուշագրին:

12. Ընդունել Ռուսաստանի Դաշնության ԲՈՀ-ի ներկայացուցչի առաջարկությունը ՄԱԳԱՏ-ի հերթական XII Կոնֆերանսը անցկացնել 2011 թվականի մայիս-հունիս ամիսներին ք.Մոսկվայում:

13. Սահմանել ՄԱԳԱՏ-ի XII Կոնֆերանսում քննարկմանն ենթակա հետևյալ հիմնական հարցերը՝

1. ՄԱԳԱՏ-ի XI Կոնֆերանսի որոշումների կատարման վերաբերյալ հաշվետվությունը (ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան).
2. ՄԱԳԱՏ-ի կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների կատարումը (ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան).
3. Որակավորման ազգային պետական մարմինների հաշվետվությունները ՄԱԳԱՏ-ի XI Կոնֆերանսի հանձնարարությունների կատարման մասին:

Փաստաթուղթը կազմված է 2010 թվականի հունիսի 23-ին, ռուսերեն լեզվով, յոթ օրինակից, որոնցից յուրաքանչյուրն հավասարազոր է:

Ադրբեջանական Հանրապետության կողմից	Տագիզադե Գ.Տ.
Հայաստանի Հանրապետության կողմից	Թռչունյան Ա.Հ.
Բելառուսի Հանրապետության կողմից	Աֆանասյեվ Ա.Ա.
Ղազախստանի Հանրապետության կողմից	Կալաբան Ն.Բ.
Մոլդովայի Հանրապետության կողմից	Սպատարու Տ.Ի.
Ռուսաստանի Դաշնության կողմից	Շամխալով Ֆ.Ի.
Ուկրաինայի կողմից	Մաչուլին Վ.Ֆ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ XII ԿՈՆՖԵՐԱՆՍԻ

ՈՐՈՇՈՒՄ

2011թ., հուլիսի 4-6, Սանկտ-Պետերբուրգ

Ամփոփելով Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիայի (ՄԱԳԱՏ) XII Կոնֆերանսի արդյունքները, մասնակից ՄԱԳԱՏ-ի անդամները համաձայնվեցին աջակցել գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման ոլորտում համագործակցության հետագա ընդլայնմանը և որոշեցին հետևյալը.

1. Ընդունել ի գիտություն ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանի և ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների հաշվետվությունները ՄԱԳԱՏ-ի XI Կոնֆերանսի որոշումների կատարման մասին:

2. Մշակել ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանի կարգավիճակի և լիազորությունների մասին Կարգի նախագիծը և ներկայացնել այն XIII Կոնֆերասում՝ քննարկման և հաստատման (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան):

Մինչև 2012թ. մարտի 1-ը ներկայացնել առաջարկություններ Շտաբ-բնակարանի կարգավիճակի և լիազորությունների մասին Կարգի նախագծի ձևավորման վերաբերյալ (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների գիտական և գիտամանկա-վարժական կադրերի որակավորման պետական մարմիններ):

3. Մշակել Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմնի կարգավիճակի և լիազորությունների մասին Կարգի նախագիծը (Պատասխանատու՝ Բելառուսի Հնարապետության ԲՈՀ):

Մինչև 2012թ. մարտի 1-ը ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան ներկայացնել առաջարկություններ Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմնի կարգավիճակի և լիազորությունների մասին Կարգի նախագծի ձևավորման վերաբերյալ (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմիններ):

4. ՄԱԳԱՏ-ի շտաբ բնակարանին՝ շարունակել աշխատանքն ասոցիացիայի ընդլայնման և նրա կազմում որպես անդամ եվրասիական տարածաշրջանի պետությունների՝ որակավորման պետական մարմինների ընդգրկման ուղղությամբ:

Մշակել Այլ պետությունների որակավորման մարմինների՝ ՄԱԳԱՏ-ի հիմնադրման Համաձայնագրին միանալու և ՄԱԳԱՏ-ի կազմից դուրս գալու մասին Կարգի նախագիծը (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան):

Մինչև 2012թ. մարտի 1-ը ներկայացնել առաջարկություններ Այլ պետությունների որակավորման մարմինների՝ ՄԱԳԱՏ-ի հիմնադրման Համաձայնագրին միանալու և ՄԱԳԱՏ-ի կազմից դուրս գալու մասին Կարգի նախագծի ձևավորման վերաբերյալ (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների գիտական և գիտամանկա-վարժական կադրերի որակավորման պետական մարմիններ):

5. Մշակել Այլ երկրների գիտնականների մասնակցությամբ ատենախոսությունների պաշտպանության համար մասնագիտական խորհրդի մասին Կարգի նախագիծը (Պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության ԲՈՀ, Ուկրաինայի գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմին):

Մինչև 2012թ. մարտի 1-ը ներկայացնել առաջարկություններ Այլ երկրների գիտնականների մասնակցությամբ ատենախոսությունների պաշտպանության համար մասնագիտական խորհրդի մասին Կարգի նախագծի ձևավորման վերաբերյալ (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների գիտական և գիտամանկա-վարժական կադրերի որակավորման պետական մարմիններ):

6. Մշակել Ատենախոսական հետազոտությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների ցանկերի փոխադարձ ճանաչման մասին Կարգի նախագիծը (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան):

Մինչև 2012թ. մարտի 1-ը ներկայացնել առաջարկություններ Գիտական հրատարակությունների ցանկերի փոխադարձ ճանաչման մասին Կարգի նախագծի ձևավորման վերաբերյալ (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմիններ):

7. Մշակել Թեկնածուական քննությունների փոխադարձ ճանաչման մասին Կարգի նախագիծը (Պատասխանատու՝ Մոլդովայի Հանրապետության Հավատարմագրման և որակավորման ազգային խորհուրդ):

Մինչև 2012թ. մարտի 1-ը ներկայացնել առաջարկություններ Թեկնածուական քննությունների փոխադարձ ճանաչման մասին Կարգի նախագծի ձևավորման վերաբերյալ (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմիններ):

8. Պատրաստել հրատարակման Օտարերկրյա պետությունների գիտական աստիճանների և գիտական կոչումների վերաբերյալ փաստաթղթերի ճանաչման և համարժեքության հաստատման մասին նյութերի ժողովածուն (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան):

Մինչև 2012թ. մարտի 1-ը ներկայացնել քաղվածքներ ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների՝ օտարերկրյա պետությունների գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին փաստաթղթերի ճանաչման և համարժեքության հաստատման հարցերը կարգավորող նորմատիվ փաստաթղթերից, ինչպես նաև համապատասխան գիտական աստիճանները և գիտական կոչումները հաստատող պետական նմուշի փաստաթղթերի ձևերը (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմիններ):

9. Հաստատել ՄԱԳԱՏ-ի Պատվոգրի մասին Կարգը:

Մշակել ՄԱԳԱՏ-ի Պատվոգրի մասին Կարգի նախագիծը (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան):

10. Հավանություն տալ Ռուսաստանի Դաշնության ԲՈՀ-ի կողմից առաջարկված՝ ՄԱԳԱՏ-ի գործունեության ապահովման լրատվական վերլուծական համակարգի ստեղծման հայեցակարգին:

Մինչև 01.10.2011թ. ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմիններին ուղարկել լրատվական վերլուծական համակարգի վերաբերյալ տեխնիկական առաջարկներ և դրա մանրամասն կառուցվածքը (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան):

Մինչև 01.01.2012թ. ներկայացնել առաջարկություններ լրատվական վերլուծական համակարգի վերաբերյալ տեխնիկական առաջարկների և դրա կառուցվածքի ճշգրտման վերաբերյալ (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմիններ):

Սահմանել լրատվական վերլուծական համակարգի տարրերի իրականացման հետևյալ ժամկետները.

- Վեբ-պորտալ – մինչև 01.03.2012թ.
- ՄԱԳԱՏ-ի տեղեկագիր – 01.03.2012թ.
- ՄԱԳԱՏ-ի իրավիճակային կենտրոն – մինչև 01.06.2012թ.

Մինչև 01.11.2011թ. ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարանին կից ստեղծել ՄԱԳԱՏ-ի լրատվական վերլուծական համակարգի մշակման և իրականացման ապահովման համակարգող խորհուրդ ՄԱԳԱՏ-ի անդամ-պետությունների ներկայացուցիչներից (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան):

11. Մինչև 01.03.2012թ. մշակել գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիայի Կանոնադրության նոր խմբագրությունը (Պատասխանատու՝ ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան):

12. Մինչև 01.03.2012թ. մշակել Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի և Գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմինների միջազգային ասոցիացիայի միջև Հուշագրի իրականացման

ուղղությամբ համատեղ միջոցառումների պլանը (Պատասխանատու՝ Ուկրաինայի գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորման պետական մարմին):

13. Ընդունել Մոլդովայի Հանրապետության Հավատարմագրման և որակավորման ազգային խորհրդի նախագահի առաջարկը և ՄԱԳԱՏ-ի հերթական XIII Կոնֆերանսը անց կացնել 2012թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Քիշնև քաղաքում:

14. Սահմանել հետևյալ հիմնական հարցերը ՄԱԳԱՏ-ի XIII Կոնֆերանսին քննարկելու համար.

1. Հաշվետվություն ՄԱԳԱՏ-ի XII Կոնֆերանսի որոշումների կատարման մասին (ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան)
2. Որակավորման ազգային պետական մարմինների հաշվետվությունները ՄԱԳԱՏ-ի XII Կոնֆերանսի հանձնարարությունների կատարման մասին
3. ՄԱԳԱՏ-ի նոր Կանոնադրության նախագծի քննարկում (ՄԱԳԱՏ-ի շտաբ-բնակարան)

Փաստաթուղթը կազմված է 2011 թվականի հուլիսի 5-ին (ք.Սանկտ-Պետերբուրգ), ռուսերեն լեզվով, յոթ օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար ուժ:

Ադրբեջանական Հանրապետության կողմից	Գ.Տ.Տագիզադե
Հայաստանի Հանրապետության կողմից	Ա.Ա.Ղուկասյան
Բելառուսի Հանրապետության կողմից	Ա.Ա.Աֆանասև
Ղազախստանի Հանրապետության կողմից	Ն.Բ.Կալաբան
Մոլդովայի Հանրապետության կողմից	Վ.Գ.Կանցեր
Ռուսաստանի Դաշնության կողմից	Ն.Ի.Արիստեր
Ուկրաինայի կողմից	Ե.Ն.Սուլիմա